

ԲԱԺԱՆՈՐԿՈՒԹԻՒՆ
 Պոչկարիոյ համար սարե-
 կան 10 ֆրակ. վերա-
 սկայ 5 ֆրակ, Արսաւահ-
 վանի համար սարեկան 12
 ֆրակ, վեցամսեայ 6 ֆր.
 ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 Իրուքիւնք եւ չեւ սրուիւր
 Ծանուցում սոյր 20 սան-
 քիւն է:

ՇԱՐՋՈՒՄ

Նախկ եւ դրաւ դրկի
 Խմբագրութեան հասցին .

—
 Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна.

—
 Redaction du journal
 „Charjourn“
 Varna (Bulgarie).

*Planned
(Antislavery)*

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ ԶՈՐԵՔՆԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

ԶԻՆՈՒՈՐ ԵՂԷՔ

Սթրալճայի կայարանը գրո-
 նուղ մեր հայաստանցի երիտա-
 սարգ եղբայրները նամակ մը
 գրած են խելահաս եւ տաքսիտ
 անձնաւորութեան մը՝ խորհուրդ
 հարցնելու թէ պուլկար կառա-
 վարութեան կողմէ զինուոր գրո-
 ուելու համար իրենց եղած պար-
 տաւորիչ հրահանգին համակեր-
 պի՞ն թէ ոչ:

Իրենց նամակին մէջ կը տըր-
 տընջան այս կարգադրութեան
 գէտ. «Մենք շուարած ենք, չգի-
 ատենք ինչ պատասխան տանք.
 գիւղապետը ըսաւ թէ բոլոր Պուլ-
 կարիոյ մէջ այսպէս պիտի ըլ-
 լայ... Տեղեկութիւններ տուէք
 մեզ այս բանին համար, որո՞ւ
 կամքով է որ այս «ագորիւնի»
 դատը մեր գէտ կելլայ...»

Զարմանալի չէ՞ երբ կործ ու
 քաջալանջ հայաստանցիներու
 բերնէ ասանկ անպատեհ ձայն
 մը կը թռչի գոգոհութեան,
 ձայն մը որ տխրութեամբ պիտի
 լեցունէ ամէն հայու սիրտ:

Սուր շարժել, զինուորական
 մարզանք սորվել, հրապէն գոր-
 ծածել, թշնամիի վրայ անվե-
 հեր խուժել, արհամարհել գըն-
 դակը, ուսմբը, մահը. այս բա-
 ներուն պակասը չէ՞ որ հինգ
 հարիւր տարի կրել սուաւ մեզ
 անհանդուրժելի բռնապետու-
 թեան մը լուծը եւ ահա, երբ
 օտարը ինքնաբերաբար այս
 թանգ ծառայութիւնը կուգայ
 մատուցանել, մենք, իբրեւ թոյլ
 ու մեղի արարած, մերժում մը կը
 նետենք անոր երեսին:

Սթափեցէ՛ք, սիրելի հայաս-
 տանցի եղբայրներ, ընդ առաջ
 վաղեցէք այդ առաջարկին. ա-
 նոր մէջն է ձեր փրկութիւնը,
 մեր փրկութիւնը, հայուն փըր-
 կութիւնը: Զինուոր եղէ՛ք. ա՛լ
 շատ մի գուրգուրաք ձեր կեան-
 քին վրայ որ բեռներու տակ կը
 մաշի, կը ծիւրի, կը փճանայ՝
 աննշան եւ անօգուտ: Կորաքա-
 մակ ապրելու ժամանակն անցած
 է ալ մեզի համար: Յցեցէ՛ք ձեր
 հուժկու, հայկական իրանը, լա-
 րեցէ՛ք ձեր կարչնեղ բազուկը,
 եւ զէնք շարժեցէ՛ք:

Հարիւր հաղարնեքով ինկանք,
 առանց զէնքի, առանց անձնա-
 պաշտպանութեան փոքր ճիգի մը.
 Լաւագոյն չէ՞ զէնքը ձեռքին իյ-
 նալ, դիւցազնօրէն, արեան դէմ
 արիւն ժայթքեցնելով:

Զինուոր եղէ՛ք. հոգ չէ, այ-
 սօր օտարին համար կը կուռիք,
 վաղը հայրենիքին համար. կը
 բաւէ որ պայքարի, մաքառ-
 ման վարժուիք: Օր մը չէ օր մը
 պիտի հնչէ մեր սպասած ըզձալի
 ժամը. աւելի աղէկ չէ՞ որ այդ
 գերագոյն վայրկեանին տարբեր
 ունենանք մեր ոխերիմ թշնա-
 միին դէմ հանելու եւ դարաւոր
 վրէժ լուծելու խելախ ու մար-
 տագոռ:

Ի՞նչ բան կը կասեցնէ ձեզ
 նետուելու սասարէշներու ամե-
 նէն աղնիւրն ու սասկտականին
 գիրկը: Մահուան երկիւղը ար-
 զեօք: Անհատաւոր է այս՝ հա-
 յուն համար որ իր եղբայրներու
 գիւղերու շեղջակոյտներուն
 վրայէն անցաւ:

Փացէ՛ք, բարեկամներ, դա-
 ցէք, առանց մէկուն խորհուրդ
 հարցնելու, զէնքին պլլուեցէ՛ք
 արբընութեամբ, վասն զի անոր
 բոց գնտակին վրայ վառուած է
 մեր ամենուս փրկութեան պայ-
 ծաւ ջահը:

ԱԿՆԱՐԿԻ ՄԸ ՏԱԿ

ԵՐԵՎ ԶՆՃՂՈՒԿ

Երեւ հաս եւ, պատուհանէն դուրս
 երկար
 Պաղ երկարիւն վրայ կեկած դիւրասար.
 Արագ արագ, նուրբ եւ կապուտ, կը
 շարժեն
 Իրենց սասիկ՝ ցատկահարով դիւր ու դիւ:
 Մին կը դառնայ դիւ պի մեր ջիւջ ա-
 պակին,
 Այլու նայուածք մը կը նկատ սրբազին
 Մեր գորգուտեւ, վառարակին ճար-
 ձասուն,
 Եւ նախանձով ե իր նայուածքը գե-
 դուն:
 Բայց նովն եկաւ շուս. ձիւնեղին վո-
 րորիկ
 Առաւ սարաւ, ա՛լ չեղեցաւ մեկ հա-
 սիկ.
 Նոյն երկարը նիւս գրցոյի դիւ պի մեր՝
 Ուր քառուցակ վայր մի սիրուն քրտչ-
 նիկներ:
 ՇԱՂԱՍՊ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՊՈՒՍԷ

(ՄԵՐ ՄԱՍՆԱՌՈՐ ԹՂԹԱԿՅԵՆ)
 Կ. Պոլիս, 6 Մարտ

Երկուշաբթի օր Վառնայէն
 մայրաքաղաքս հասնող հայ
 դաղթականներուն համար օրի-
 նական սա ձեւակերպութիւնը
 կատարուեցաւ. ամէն մարդ զըր-
 կուեցաւ հոն ուր պիտի հաստա-
 տէր իր բնակութիւն, եւ իւրա-
 քանչիւր դարձողի համար հինգ
 մարդ գրաւորապէս երաշխաւո-
 րեց անոր պատուաւորութիւնը:
 Առաջ այսպէս չէր. ամէն եկող
 «անպատճառ» Ոստիկանութեան
 գուռը կը տարուէր եւ հոն կը
 հարցուէր թէ ուր տեղացի է,
 ի՞նչ բանի համար գացած էր
 Վառնա, ինչպէս ապրած էր հոն
 եւյլն. եւ յետոյ կը զրկուէր իր
 թաղը, ու եթէ չի կարենար ե-
 րաշխաւոր տալ՝ եւ կը բերուէր
 մինչեւ որ գանուէր երաշխաւո-
 րը: Հիմակ ի գործ դրուած ե-
 ղանակը առջինն է: Հետեւապէս
 գործը քիչ մը գիւրացած է այժմ:
 Շարժուս մէջ Պոլսոյ բոլոր
 ձուլարանները գոցուեցան եւ
 կնքուեցան: Զուլիչները կանչուե-
 ցան ներքին գործերու նախարա-
 րին քով որ ըսաւ անոնց. «Սուլ-
 թանը հրամայած է որ այլեւս
 դազրիք գործելէ. ձեզի մէյմէկ
 պաշտօն պիտի տրուի, եւ ձեր
 գոյքերուն փոխարէնը պիտի վը-
 ճարուի (°):» Այսուհետեւ միմի-
 այն Մէքթէպի Սէնային գիր պի-
 տի ձուլէ:

Սակայն Սուլթանը չի բաւա-
 կանանար միայն Պոլսոյ ձուլա-
 րանները անգործութեան դա-
 տապարտելով: Վասն զի կառա-
 վարութիւնը Պուլկարիա զրկած է
 Պ. Յարութիւն Ասատուրեանը,
 պետ Գրաշարաց Ընկերութեան,
 եւ անոր ձեռքով գնած է բոլոր
 պատրաստի գտնուած թուրքերէն
 տառերը: Սոֆեաի ծանօթ հայ
 ձուլիչ Պ. Յակոբ Ծերունեանին
 ալ ամսական մը յատկացուեր է
 թուրքերէն սառ չձուլելու հա-
 մար: Զեմ գիտեր թէ Եպիպոստի
 համար ինչ տնօրինուած է:
 Իրողութիւնը սա է որ տեղւոյս
 ձուլարաններուն բոլոր բանուր-

ները ձեռուրնին ծոցերնին խո-
 թած՝ ձուլարաններուն առջեւ
 նստած մեղամաղձօրէն կը մտմը-
 տա՞ն:

Այսօր ստուգապէս հաստա-
 ուեցաւ թէ երկրորդական տպա-
 րանները, այսինքն նամակա-
 գրուի, էթիքէզ, պղտիկ աղ-
 դեր, այցեատմա եւ մինչեւ իսկ
 գիրք տպող փոքր տպարաններն
 ալ պիտի գոցուին եւ միմիայն
 քանի մը գլխաւոր տպարաններ
 բաց պիտի մնան: Սուլթանին
 այս յառաջդիմասէր եւ լուսա-
 միտ (°) կարգադրութիւններն
 անոր համար են եղեր որ թուր-
 քերէն կամ հայերէն «Պեսասակար»
 յայտարարութիւններ եւ թղթեր
 չտպուին: Յաւալին այն է որ
 կըսուի թէ այս ձախող տնօրի-
 նութեան թելադրիչն եղած է
 յիշեալ Յարութիւն Ասատուրեա-
 նը, որուն 2,000 զրուշ ամսական
 յատկացուեր է:

Հոս հանրային կարծիքը բա-
 ւական յուզուած դրութեան մէջ
 է: Նախարարութիւնը շարունակ
 նիստեր կընէ Երլտըզի պալատին
 մէջ, առանձնակի: Ռուսիոյ գէտ
 շարժում մը սկսած է: Զինուորա-
 կան նախարարները Ռուսիոյ գի-
 մադրելու կողմնակից են, իսկ
 քաղաքային նախարարները «տե-
 ղերնիս ծանր նստինք» կըսեն:

Թուրք ժողովուրդը սասկտա-
 կան ձգտումներով տոգորուած է
 բոլորովին. յունական յաղթու-
 թիւնը շլացուցած եւ կուրացու-
 ցած է ամէնքը: «Երբ պատե-
 րազմ հրատարակուի, ամէնս ալ
 զինուոր ենք, ու Ստանձագը Ե-
 րիֆը գուրս պիտի հանուի», կը-
 սեն:

Քանի մը օր առաջ, Եէնիգիւ-
 ղի բարձունքին վրայ բնակող
 մուհաճիրները գիւղի վրայ պի-
 տի յարձակէին աւելորդ է բսել
 թէ ինչ ընելու համար, բայց
 ժամանակին լուելով, առաջըն
 սառնուեցաւ աղէտալի գէպքի մը:
 Ֆրանսական զեսպան Պ. Կան-
 պօն այս առթիւ նօթա մը
 տուաւ Բ. Դրան, ուր մնաց...
 Արտաքին գործերու նախարա-
 րութեան մէջ այսօր այնքան նօ-

elle est la seule gazette d. H.

Թա կայ որքան չիկայ Գոմէնտի- կէրի վաճառատան մէջ :

Հայոց Պատրիարքարանէն հրա- հանգ մը զրկուած է տեղւոյդ- Թաղական Խորհրդին, Վառնաէն մայրաքաղաքս վերադառնալ ու- զողներու մասին :

ԲԱՌԻՉԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

—(—) (Մեր մասնաւոր քրդակցին)

Բարեկ, 1 Մարտ

Փետրուար 26ին տեղի ունեցաւ հայ ուսանողներու երեկոյթ-պարա- հանդէսը, շատ շքեղ կերպով : Որոշ- ուած ժամուէն ընտրեալ բազմութիւն մը ներկայ էր, բացի մէկ քանի արուեստագէտներէ, որոնք հակառակ իրենց խոստման բացակայեցան :

Երեկոյթին հերոսները Բարեկի բեմական աշխարհին հոյակապ ներ- կայացուցիչներէն էին, ինչպէս Մու- նէ-Սիւլի, Անտէլ, Ռամօ և Օտէո- նի բեմին թագուհին Տիկին Վէպլո, որոնք անձնուիրարար հաճած էին ի- րենց թանկագին աջակցութիւնը նուիրել աղքատ հայ ուսանողութեան օգտին սահմանուած այս հանդէսին : Կերպարներէն նաեւ Պ. Պ. Արշակ Չօ- պանեան և Վահրամ Սվաճեան, ու- ռոնք ոչ նուազ նպաստեցին հանդէ- սին փայլն աւելցնելու :

Երեկոյթը վերջացաւ նոր Կեանքի Ա թիւին մէջ Պ. Չօպանեանի հրա- տարակած «Հայաստանի օրօրը» քեր- թուածին ֆրանսերէն արտասանու- թեամբը Պ. Ռամօի կողմէ, առաջին գերակառար Օտէոն թատրոնի : Պ. Ռամօ հոգի տուաւ ոտանաւորին և հանդիսականներուն ներկայացուց Պ. Չօպանեանը իբրև հայ բանաստեղծ, զոր խանդավառութեամբ ծափեցին ներկայ ֆրանսացիք, ի սեռ կանչե- լով զայն :

ՎԱՐՊ-ՊԱՏՐԻԱՌՈՎԻ ՅԵՇՍԱԿԱՊԱՆԸ (5)

Ահա ձեզ յեղափոխականներ, ու- ռոնք բոլորն էլ որոշ կրթութիւն ստացած և զեռ փոքրից յեղափոխա- կան մարտիկ են եղել, և երեւակա- յել որ զրանք կարող էին խաղալիք դառնալ այս կամ այն անհատի ձեռ- քով, այդ կը նշանակէ վերաւորել նրանց յիշատակը, որոնք կրթու- թեան պաշարով, կեանքի մէջ որոշ գիրք ու փորձութիւն ձեռք բերելուց յետոյ՝ մտել էին յեղափոխութեան մէջ :

Ճեմարանում Ֆեացի մինչև 83 թիւը. այդ հոկտեմբերին մեծ խռովութիւն բարձրացաւ Ճեմարա- նում Արշակ Նահապետեանի դէմ, ևս էլ խռովարարներ մէջ էին, և Մա- կար կաթողիկոսի ձեռքով ինձ և ուրիշ տասներկու հոգու արձակեցին Ճեմարանից—այդ տասներկու հոգին վեցերորդ, եօթերորդ և ութերորդ դասարանի աշակերտներէն, միայն ևս էի չորրորդը վերջացրած : Շատ մեծ ուրախութեամբ հեռացայ այդ վանական դպրոցից, ուր ազգային և լեզուական ինչ որ հարկաւոր էր արդէն վերցրել էի և մեծ ցանկու- թիւն ու փափագ ունէի ուսուցողը դպ- րոց մտնելու, որին միշտ հակառա- կում էր մօրեղբայրս :

Ճեմարանում շատ չար էի և միշտ ըմբոստ ուսուցիչներէ և տեսչի դէմ, շարունակ պատժուած էի, մի անգամ նոյն խի երեք շարաթով աքսորեցին Վաղարշապատ, մօրեղ-

կէս գիշերէն ետք սկսու պարա- հանդէսը, որ տեւեց մինչև ժամը չորս, թէև հանդիսականներուն մե- ծագոյն մասը չմասնակցեցաւ :

Չմտնամ բեկու որ բողոքական ֆրանսացիները մեծ մասամբ մեր- ժած էին սոմաակ գնել, պարահան- գէսն ասարկելով : Արդէն ուսանող- ներուն մեծ մասը քուէով մերժած էր պարի մասը և ընդունած էր միմիայն երեկոյթը, ինչ որ աւելի վայել էր «սգաւոր ազգի մը զաւակ- ներուն» : Չուտ գրական երեկոյթ մը շատ աւելի պիտի յաջողէր, ու թերևս 1,000 ֆրանքի մօտ հասոյթ գոյանար, քանի որ այս պայման- ներուն մէջ հարկէ կարծեմ 200 ֆր- գոյացած է : Կուէով արուած յիշեալ խոհական և լուրջ որոշում մէկ քանի պարամոլ երիտասարդներու կողմէ մերժուեցաւ :

Ինչպէս ամէն տեղ, նոյնպէս Բա- րեկի մէջ բարենպաստակ ու է հաս- տատութեան նպաստի առթիւ կա- րևոր անձնաւորութեան մը հովա- նաւորութիւնը անհրաժեշտ է՝ յա- ջողուելու համար : Այս ալ կը պակ- սէր մեր երեկոյթին :

Վերջապէս կը սիրենք յուսալ թէ այս առաջին օրինակէն խրատուելով ուրիշ առնն հանդէսի մը կազմակեր- պիչները աւելի լուրջ և բանաւոր կերպով էր ձեռնարկեն գործի :

Տիսօ

ԵՐԿՏՈՂ ՍԸ «ԱՐՄԵՆԱԿՈՒՆ

—(—)

«Եթէ Վառնաի Տարոսին գրած- ները ճիշդ են, — և մենք պատճառ մը չունինք ստուգութեանը վրայ կասկածելու... »

Այս խախտու հիման վրայ յեն- լով է որ Մարտիկի մամուլի բրածոն, իր խանութ-թերթին վերջին թիւին մէջ մեր վրայ կը յարձակի :

Պ. Փորթուզաբեան պէտք է գիտ-

բորս ստուշ :

Հայութիւնն և հայի համար սրտի ցաւ ունենալու հաստատուեց ձեմարա- նում :

Մի օր մատենագրութեան դա- սին, երբ ուսուցիչը բացատրեց «Մայր Արաքսի» նշանակութիւնը, ևս և երկու ընկեր որոշեցինք ու- ղով գնալ Արաքսը տեսնելու : Եւ գնացինք, առանց իրաւունք խնդ- րելու, 35 մղոն անդ ոտքով. երբ հասանք Արաքսի ափին, չոգեցինք, նախ ջուրը համբուրեցինք և ապա ուխտեցինք Հայրենիքի հաւատարմ գիւնուր լինել : Այդ 82 թւականին էր :

Մտացայ յիշել մի գէպը ձեմա- րանի կեանքից, որը նոյնպէս յե- ղափոխական տեսակետից նշանակու- թիւն ունի : 82 թւի սեպտեմբերի կամ հոկտեմբերի վերջերն էր. չորրորդ դասարանում էի որոշ չա- փով կազմակերպված և որոշ ուղ- ղութիւն ստացած, 16-17 տարեկան պատանի : Ճեմարանի վարչութիւնը արդէն որոշ զաղափար ունէր իմ մա- սին. ուսուցիչներէ համար կատար- եալ փորձանք էի իմ յաճախակի ըմ- բոստութիւններով, որովհետև կեղծ էին, և իրանց պահում էին ոչ իմ- վիական բարձրութեան վրայ, մի խօսքով ձեմարանի վարչութիւնը ինձ ճանաչում էր իբր ըմբոստ, յան- դուգն և բոնութեան ու խիստ օ- ղնեցնելի դէմ կուող տարրի ան- դա՛ն երկից մէկին :

Իմ ընդհարու Կեբի հաշիւը չը կար ամենաազդեցիկ ուսուցիչներէ հետ :

նայ թէ մեր թերթին գոյնը ու ճշգ- ստուծները միմիայն իր պարունակու- թենէն կարող էր դատել և ոչ թէ կեղտոտ և կասկածելի աղբիւրի մը զիմելով :

Այսպէս, Պ. Արշակ Չօպանեան մեր թերթը կարգաւորվ է որ իր կար- ծիքը—կարծիք՝ անբախտատելի կեր- պով բարձր քան Փորթուզաբեանի մը կարծիքը—յայտնած է մեզ նամա- կով մը ուսկից հետեւեալ սողերը մէջ բերելու. փորձութեան չենք կր- նար ստկալ. «Ձեր թերթը կը ստա- նամ և մեծ ախորժով կը կարգամ. առանց կուսակցական ինստ ակոթեան ք՝ րք մը և : Կը մտղթեմ որ յաջո- ղիք լինի» :

Այսպէս նաև մենք՝ տարիներով Ար. Ենիւս կարգաւորվ է որ համագում գոյացուցած ենք թէ այդ թերթը ա- լելուրդ բն մըն է իր անվերջանալի սին մուտուքներովը, թէ իր դերը ազգին մէջ երկպառակութեանը ծագեցնելէ անդին չէ անցած և թէ իրաւունք ունինք անդառնալի կեր- պով յուսահատելու Արևելիան որ հայութեան ամէնէն արևունալի և տագնապալից օրերուն մէջ իր ճա- կատար պնդազարգած է բաժանորդա- դրութեան և համբուսուոր գանձա- նակին փայլուն ծանուցումներովը :

Այս ճշմարտութիւնը մեզ հաւտա- ցրնել կուտայ թէ Պ. Փորթուզաբեան այնքան անհանդիստ չէ եղած մեր դաւանանքներուն վրա. ախորժութե- նէն (°) ազգին դէմ, որքան Շարժումի երեւու մէն իր խանութ-թերթին հա- մար. և ատոր համար է որ մէկ կող- մէն իր ապրանքին գինը յանկարծ զեղչելով, միւս կողմէն ալ բերանը կաւրէ ճիշդ հրեայ հնամասնութիւն մը պոչաւորովը :

Առանց մեր թերթերը անգամ մը աչքէ անցնելու, անխորհրդաբար հը- րապարակ նետուելը այնքան խոշոր սխալ մըն է ուսկից անշուշտ այս պահուս զղջացած ըլլալու է ձեր աղ-

ուէս մը որ տասներեք տարի յաջո- ղած է Ազգը խաբել և որ սակայն վերջապէ. իր արդար պատիժը գտած է անպէտ խլակի մը պէս լըք- ուելով Միջերկրականի ափերուն վրայ :

Եւ յետոյ Պ. Փորթուզաբեան ի՞նչ- պէս իրեն փաստ կը բռնէ թերթ մը որուն տնօրէնը ինք ասկէց քանի մը տարիներ ատաջ խաբեայ հոչակած էր, մասնաւոր նամակի մը մէջ, «Հայոց Հայրենասիրական Միու- թեան» պաշտօնական թղթին վրայ և իր ձեռագրով ու ստորագրութեամբ- րը խմբագրուած :

Աղքատէր անձնաւորութիւն մը ա՛լ զգուած Փորթուզաբեանի և նը- մաններուն լրբութիւններէն, մեզ զրկած է այդ նամակը, 1891 թուա- կիր, ուսկից կը քաղենք միայն հե- տեւեալ տողերը .

«Չաքրբեան վէ էմսալլէրի կէջէն սէնէ պու կամ որ քէյֆլէթիւնէն էն չօղ շարժանլարտան խալէր. օրատա, պուրատա խապէր կէտնտերիպ կամա- տրլար տալէթ իթտրէր վէ էվէլէ- տէն տէ «Մայրսըն 20ճի եախօտ Միւ- ոսնըն օժման կիւնիւնտէ ապստամ- բութիւն չըզարտաձղըզ» կիպի պիր թապըմ ֆայտէսիղ լաֆար աթարազ չօղարը աչաքսըչար »

Իր խանութ-թերթին շահերուն համաձայն ան ա խաբեայ հոչակել և յետոյ գործին եկած ատեն ստու- գութեանը չի տարակուսիլ և թեր- թերու ու կուսակցութիւններու վը- րայ յարձակիլ, Փորթուզաբեանի հա- մար օտար և նոր սեպարարութիւն- ներ չեն :

ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ

Ֆիլիպպէն երկու նամակներ ստա- ցած ենք, երկուքն ալ յարգուած և վատանելի անձերէ գրուած և սակայն հիմնապէս զիրար հակասող : Ատիկա

— Պարոն տեսուչը ձեզ կուզէ, պատասխանում է ծառան :

Չարմանքիս չափ չը կար. ժամի եր ուսին տեսուչը ի՞նչ գործ ունի ինձ հետ, մտածում եմ ես :

Յանկարծ կայծակի արագութեամբ մտքովս անցնում է — հա՛, հասկցայ, ուզում են ինձ արձակել ձեմարանից : Կիշերով, առանց աշակերտներին ի- մացնելու, Պ. Նահապետեանը ձիշդ սուլթանական սխտէմով փոքր ի չափ- տէ յարգված աշակերտներին հեռա- ցնում էր աննկատելի կերպով :

Այդ միջոցներին, ձեմարանում ստացվել էր Գամառ Գաթիլայի ան- տիպ ազատ գրուածներից «Ազգային երգումն» խորագրով մի բանաստեղ- ծութիւնը, որը կարծեմ նուիրուած էր կարնոյտապիւն ձեբրակալութիւն- ներին : Իբրանից մի օրինակ էլ ես էի ստացել հենց այդ օրերումս :

Ամէն գիշեր այդ բանաստեղծու- թիւնը կարգում էի ննջարանի աղօս- լոյսի տակ, թէև շատ վաղուց բե- րան էի արել, սակայն միշտ հըրճ- ուանքով էի կարգում, ու կարգաւորց յետոյ գնում էի բարձիս տակը :

Վերջապէս ծառայի երկրորդ ան- գամ կրկնած առաջարկին — չուա ա- րէք, լուսանում է, սպասում են, անկողնիցս վեր թռայ, սկսեցի շտա- պով հազվել, և համոզված լինելով որ բոլորովին հեռանալու եմ ձեմա- րանից, բարձիս տակիցը վերցրի ևս իմ սիրած բանաստեղծութիւնը ու զրի գրպանս :

(Շարունակելի)

այնչափ զարմանալու բան չէ, զի ամեն մարդ հակամէտ է հաւատալու իր դատին արգարութեանը :

Խնդիրը վարդանանցի գայթակղութեան շուրջը կը դառնայ :

Մենք փորձ մը պիտի ընենք զտեւրու հետեւն մեզի հասած այլեւ այլ արձագանգները, որոշելու համար ամեն մէկուն պատասխանատուութեան բաժինը :

Տեղացի երիտասարդ մը, որուն արժանիքին վրայ մեծ գովեստով կը խօսուի, զինքը շրջապատող անտարբերութեանն վշտացած, հայերու համայնքում մը տեսնելով՝ յարմար առիթ կը սեպէ արտաբերելու քանի մը բուռն խօսքեր զորս կուտակուած ցատու մը սրտէն կը խլէր այդ վայրկեանին : Ատենաբանը եթէ կէտի մը մէջ սխալած է, ան ալ սա է որ ազգային սուն մը իրիկի մը հետ շփոթած է, ինչպէս Սիւրստրէի ուսուցիչներէն մէկն ալ նոյն հանդէսը համալսարանի դասախօսութեան մը հետ շփոթած էր, քննական պատմութեան վրայ իր ունեցած հմտութեանը ծախելով բնմին վրայէն : Մեծկակ սխալներ են ասոնք : Ատենաբանի մը պարտքն է ամէն բանէ առաջ միջավայրը աչքի առջեւ ունենալ :

Տեղեր կան ուր կարելի է յափշտակուել, զոտալ, փրփրալ, բայց սեղանը ալ կան ուր վստմ ըլլալ պէտք է : Վարդանանցի հանդէս մը այս վերջին անսակէն է :

Եւ սակայն ատենաբանութեան մը վերջակէտը դնել սալու համար հըրազէն պարպել ուրիշ միջոց չի կար, ձանդելին այս երկրորդ մասը անորակելի յանդգնութիւն մըն է որ երբեք չի կրնար արդարանալ որքան ալ կծու, նոյն իսկ եթէ հայտնայից ըլլան արտաբերուած խօսքերը : Եթէ բնմին վրայէն մարդ շատ անգամ յափշտակութեան վայրկեանի մը մէջ անկարող կըլլայ իր թափը զսպել, նոյն բանը չէ նաեւ զէնք կրող անձի մը համար որ կրնար իր ասորձանակը սուներ թողուլ : Ուստի երբ կանխամտածութեան ծանրացուցիչ պարագան ալ գայ բարդուել կրնորու եւ երախաներու այդ անարեկչին զատապարտելի արարքին վրայ, ինչդիրը պարզ յանցանքի գոյնը կորսնցնեն զոնկելի վատութեան մը զորով կանէ : Եթէ, ինչպէս կը հաւատաստեն մեզ, ոչ-յեղափոխական մըն է այդ ծաղրելի հերոսը, մենք ուրախ կըլլանք, վասն զի կըզձանք ամէն ատեն յեղափոխականները իրենց կոչման բարձրութեանը վրայ տեսնել : Եւ կը փափագինք որ եթէ կարելի էր, խնդիրը օրինաւորապէս ստուգուելէ ետք այդ ստանակին անունը բոլոր թերթերուն մէջ հրատարակուէր իրիւր արտոյական մեծագոյն պատժողոր կարելի ըլլայ ալ ազգային շրջանակի մէջ :

Մեր շերտագոյն փախազն է նաեւ որ այս անհեթեթ միջադէպին արտադրած յուզումը օր առաջ անհետանայ փրփրալէ, մտքերը հանդարտին՝ յստակ տեսնելու համար թէ ինչ կը պահանջեն ազգին շահերը, եւ վերջապէս, առաջիկայի նմանօրինակ միջադէպերու առաջքը ասնելու համար, անոնց սկզբնական պատճառները մեկուսացուին :

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

Խարբերդի մէջ միտնալ Պ. Կէյրզ յոյժ գրական առաջարկ մը ըրեր է ձմրան երեսէն տա-

ռապող աղքատներուն օգնելու համար : Ըսեր է որ Խարբերդցիները իրենց մէջ քանի սակի կամ քանի սակի արժէքով նիւթ հաւաքեն, ինք անոր հնգապատիկը պիտի նպատէ : այսինքն եթէ տեղային միջոցներով 50 սակի հաւաքուի, 250 սակի ալ Պ. Կէյրզ ինք պիտի տայ : Ահա թէ ինչպէս մարդ բարեգործութիւն ընելով հանդերձ կը որվեցունէ զայն հասարակութեան :

— Պոլսոյ սպազրական սեւաչուութիւնը հերքմնադիր մը ուղղելով «Բիւզանդիոն»ի, դատական նախարարութեան կողմէ բացարձակ կը հերքէ այն լուրը թէ Խապանի Սահակ եպիսկոպոս Սոխ կաթողիկոս և ընտրելի նշանակուած ըլլայ :

— Պոլսոյ «Մասիս» օրաթերթը Մոզկապոլի կիւրակին դրական յաւելում մը պիտի հանէ Աղբ. Հիւանդանոցին օգտին համար : Գինը պիտի ըլլայ կէս ֆըրանքէն վեր մինչեւ հոն ուր ոչորմասիրութիւնը կրնայ բարձրանալ : «Մասիս» ինքը կը հոգայ սպազրական և բոստի բարձր ծախքը : Արտասահմանի հայութեան համար յոյժ պատեհ առիթ մըն է օգնելու «ազգին տանը», ուր հազարի մօտ հայեր կը խնամուին :

— Պ. Ամիրխանեանց «Մշակ»ի մէջ նամակ մը հրատարակել տուած է՝ որ համառօտ տեղեկութիւններ կը հազորդէ Վառնայի զաղթականներուն օգնելու համար Գերմանիայէն ստացած հարկը հազար մարքին գործածութեան մասին : 7,000 ֆր. չորս տուն վարձած է, եօթնական աշակերտով և մէյնէկ վարպետով թիթեղագործարան մը և ասազձարան մը հիմնած է, նաև գորգի գործարան մը և հայկական ձեռարուեստներու աշխատանոց մը 70 գործաւորուհիներով, որոց արտադրած 2,000 բուպլիի ձեռագործները տակաւին չեն ծախուած : Ֆետոյ Վառնայի մէջ հիմնած է դպրոց—որբանոց մը 50 աշակերտներով կէս առ կէս գիշերօթիկ : Աւրիշ գըզըրոց մը Պուրկաղի մէջ, 30 աշակերտներով : Ողբումի թիւ քիչ տուած է Պ. Ամիրխանեանց, բայց ասոր պիտան դիւրութիւններ ընծայած է արհեստաւորներու : Այսպէս Պուրկաղի մէջ 500 ֆր. նպատա տուած է թաշկինակի գործարանի մը հիմնարկութեան ուր տասնհինգ հոգի կաշխատին : Անցեալ տարի երեք չորս ամիս 280 գաղթ. ազգայններ կերակրած է և ջերմի համաճարակին 3000 ֆր. ծախած է գեղի և ուրիշ պէտքերու : Իսկ այս ձմեռ 15,000 քիւր ածուխ բաշխած է աղքատներուն :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ԹՈՒՐԻՔԻ Ա ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ
1897 զեկտ. 4ին Կ. Պոլսոյ մէջ կնքուած հաշտութեան գաշտադրին արամագրութիւնները մինչեւ հիմա միայն ինզճ Յունաստանի կողմէ գործադրուեցան :

Այս գաշտագրին ուժով Թուրքիա պարտաւոր էր Թեաւիան պարպել յօգ. 2ին պահանջը կատարուելուն պէս. այսինքն երբ պատերազման, ուզանքին շուտափոյթ վճարման համար պետութեանց հաւանութեամբ կարգադրութիւն մը ըլլար, և երկրորդ՝ Յունաստանի մէջ նոր օրէնք մը քուէարկուեր է միջազգային քոնդրուլի մը հաս առումը վաւերացնող :

Արգ՝ գիտենք թէ Անգլիա, Ֆրանսա և Ռուսիա հելլենական հարկեր միջլեոն ֆրանքի : Ռուսութիւնը երաշխաւորեցին. և միւս կողմէ թէ՛ միջազգային յանձնաժողովը օրինաւորապէս հաստատուեցաւ և թէ պահանջուած յարակից օրէնքը քուէարկուեցաւ Յունաց Երեսփոխանական փոլովին կողմէ :

Իսկ թուրքը, ասոնց վստաւէն, ոչ միայն Թեաւիան չի պարպեր, այլ օրէ օր նոր ուժեր զրկելով, ամբոցներ կանգնելով, տուրքեր հաս առելով այդ պատահին մէջ վերջնապէս հաստատուելու հովեր կանէ :

Թուրքին այս յիմարական մտադրութիւնը սա պարագայէն ալ կը գուշակուի որ իր ամբողջ ուժը կը թափէ որպէս զի Կրէտէի խնդրին հետ ձուլէ նաև Թեսալիան, անլուծելի կորդեան հանգոյց մը կազմելով երկուքէն :

Եւ սակայն մասնաւորապէս Ռուսիա արամագրի շեղուող շատ ազատ ապարէզ թողլու Թուրքիոյ, դիւանագիտա ան սնանկացում հոչակել ևնդիւր շափ դիւրութեամբ : Իր թեկնածուին մերժուելէն ատու կ սրբողած՝ Պոլսոյ գեապանին միջոցով իր անվերջանալի առնելիքին սհաւել կիշ ուրուականը կը կանգնեցընէ Գրան դէմ : Պ. Ձէնովիէվ 750,000 սակի կը պահանջէ այս պահուս առանց Թէվիի գաշայի պաղատանքին ականջ կախելու և կաւելցնէ թէ՛ հակառակ պարագային իր պահանջը պիտի կրկնապատուէ : Հայն գործադրել տալու միջոցներն ալ չի մտնալով ձեռք առնել : Տարա ոյս չի կայ թէ Ռուսոյ բռնած այս ըսպանական գերը, որուն ազդեցութիւնը Պուրկաղի մէջ ալ կը զգացուի, Թուրքիոյ ձեռք բերած գիւրագնի գափնիներուն վրոյ լիարուսն փուշեր կը սխուէ :

ԳԵՒՄԱՆ ԻՄ ԳԱՃՈՒԱԾ

Մարտ 5ին Կրէտէի գերմանական զօրքերը «Օլտէնպուրկ» զըրահաւորով մեկնեցան կղզիէն շիտակ Մէսինա, անկից Թոնճէր երթալու համար : Գերմանական գրօը կանուխ վար առնուեցաւ Գանեաի պատնէշներէն, յետոյ «Օլտէնպուրկ» հրամանատարը ներկայ գտնուեցաւ միջազգային զօրահանդէսին, ու գերման զինուորները կէս օր, նմա նստան : Քաղաքական այս դէպք շննա-

զան մեկնութիւններու առիթ կուտայ եւրոպական մամուլին կողմէ : «Քէօլնիշէ Չայթունկ» կըսէ թէ ևկած է ատենն ուր Գերմանիա հանդարտօրէն կը թողու կը հեռանայ եւրոպական համաձայնութենէն : «Գերմանիա, մանաւանդ Սուրաստանի պարտքի խնդրին կարգադրութենէն ետք, վեց մեծ տէրութիւններու համաձայնութեան զինքը ընդգիմանալու գրող բաւական շահեր չունի, մանաւանդ որ Կրէտէն բարեկարգելու համար զինուորական մեծ ուժեր և կարեւոր գումարներ հարկաւոր են, որոնց իր բաժինը տալ բնականաբար միւս քէն շանցունեցեցեման կայսրութիւնը :

«Հետեւապէս Կրէտէի բարեկարգութիւնը այսուհետեւ Ռուսիոյ, Ֆրանսայի և Անգլիոյ ձեռքէն է. բայց եթէ Գերմանիա կը քաշուի, չի նշանակել թէ վերջնապէս կը բաժնուի եւրոպական համաձայնութենէն՝ Արեւելքի խնդրին մէջ :

«Տէլլի Նիւս» կըսէ թէ Կրէտէի մասին Գերմանիոյ այս հեռացումը երկար ատենէ ի վեր Արեւելքէ եկած լաւագոյն լուրն է, քանի որ Ռուսիա, Ֆրանսա և Անգլիա այսուհետեւ պիտի կրնան կատարեալ ազատութեամբ աշխատիլ ուղածնուն պէս լուծելու կրկնական հարցը : «Քայմի» աւելի զգուշաւոր ու խոհեմ լեզու կը գործածէ, կը բաւականանայ յոյս յայտնելով թէ «Մընգահարին մեկնումը՝ նուազահանդէսին (քօստէս) միւս երաժիշտներուն կողմէ պէտք չէ որ նկատուի թշնամական արարք մը իրենց նկատմամբ» :

ՄԻԱՅՆԱԿԱՆ ԶԱՆԳԻՆ

Նանքիները բանի գործի վրայ են : Երբ մէկ կողմէ հանրապետութեան նախագահ Պ. Մաք Քինլի իբր թէ կը յայտարարէ «Աւելի նախամեծար կը համարեմ որ իմ վարչութիւնս խայտառակ կերպով ձախողի քան թէ սրբապիղծ պատերազմի մը պատասխանատուութեան ծանրանալը տեսնեմ իմ վրաս», միւս կողմէ ամազոնեան երեք յաժառարակներ վերջնապէս կը գնեն, և 7,500,000 ֆր. ի սակի կապապրեն ներուպա. և մինչեւ իսկ, յոյն լրագիրներու ըսածին նայելով, մէկու կէս միլիոն ֆր. կառաջարկեն յունական երեք զրահաւորներու :

Իսկ միտքերու գերագրգռումը Սպանիոյ դէմ, չափ ու սահման չունի : Թատրոնի մը մէջ սպանական գրօը գետնը կը գամեն որպէս զի անցնող պարճող կոխկուտէ զայն :

Կը տեսնէ՞ք սա սմեղուկ եանքիներուն շարսճճիութիւնները :

